

Հրազդան գետի և Երևանյան լճի աղտոտվածության հիմնախնդիրները.  
առաջարկություններ դրանց բարելավման ուղղությամբ

## Խնդրի նկարագրություն

**Հրազդան գետը** սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում է Հայաստանի Հանրապետության չորս վարչական տարածքներով, այդ թվում հանրապետության կենտրոնական մասով՝ մայրաքաղաքով:

Հրազդան գետի ջրի որակը ըստ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերնոլոգիայի և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների Քաղսի գյուղից ներքև 2020թ. 4-րդ եռամսյակում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին (մյուս ժամանակահատվածներում նույնպես գրեթե նույն պատկերն է) գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Արգել գուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից ներքև, Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, Հրազդան գետի գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Հրազդան գետը մուտք է գործում Երևան աղտոտիչների արդեն իսկ բավականին բարձր կոնցենտրացիաներով՝ գետի վերին հոսանքների մոտ կենցաղային, արդյունաբերական և գյուղատնտեսական գործունեության հետևանքով: Այնուամենայնիվ, աղտոտման մակարդակները նշանակալիորեն ավելանում են Երևանի միջով հոսելիս, Երևանի տարածքում «Գրանդ Սան» և «Արմենալ» գործարանները ջրի արդյունաբերական աղտոտման գլխավոր աղբյուրներն են:

**Երևանյան լիճը** արհեստական ջրամբար է, ոռոգման ջրի պահոց կառուցված Երևանի տարածքում՝ Հրազդան գետի վրա: Մակերեսը 650000 ք.մ է, միջին խորությունը՝ 8 (առավելագույնը՝ 18մ): Զրամբարի ստեղծման նպատակը Հրազդան գետի հոսքի կարգավորումն է և ջրերի օգտագործումը:

Երևանյան լճի ջրի որակը գնահատվում է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, նիտրիտ իոններով և կախյալ նյութերով:

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի մայիսի 25-ի N 383-Ա որոշման համաձայն հաստատվել է «Հրազդան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022թ. ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները» ծրագիրը: Այս

Ծրագրի հիմնավորման մեջ հստակորեն նշված են Հրագրան գետի և Երևանյան լճի էկոլոգիական անբարենպաստ իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև նշված է, որ ծրագրով նախատեսված գործողություններն ուղղված են գետի և լճի էկոլոգիական վիճակի բարելավմանը: Սակայն ծրագրով նախատեսված գործողություններից, որոնք միայն աղբառուսիչ միջոցառումներ են նախատեսում, միանգամայն պարզ է որ էական դեր չեն կատարելու Հրագրան գետի և Երևանյան լճի էկոլոգիական վիճակի բարելավման ուղղությամբ: Նախորդ տարիներին նույնպես Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվել են նմանատիպ աշխատանքներ, պարզապես այս ծրագրով փոփոխվել է ֆինանսավորման աղբյուրները. 2022թ.-ին «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» 2001 թվականի մայիսի 15-ի ՀՀ օրենքի՝ Երևան համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների հետևանքով շրջակա այդ թվում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից համայնքին հատկացված մասհանումների միջոցներով կիրականացվի 60430.0 հազար դրամ գումարի չափով աշխատանքներ, որին կավելանա արտաքին աղբյուրներից համաֆինանսավորվող 56430.0 հազար դրամ: Ամբողջական ծրագրի գումարը կկազմի 112860.0 հազար դրամ:

### **Եզրակացություն**

Վերը նշված խնդրի նկարագրությունից պարզ է դառնում, որ Երևան քաղաքի ջրային օբյեկտները գտնվում են վատ վիճակում, իսկ դրանց բարելավման ուղղությամբ քաղաքապետարանի կողմից իրականացվող ծրագրերը արդյունավետ չեն կարող համարվել, քանի որ դրանք ուղղված չեն աղտոտման պատճառների վերացմանը, այնուհետև այդ ջրային օբյեկտների էկոլոգիական վիճակի բարելավմանը:

### **Առաջարկություններ Երևանի քաղաքապետարանին**

- կատարել ուսումնասիրություն, Հրագրան գետի աղտոտման աղբյուրների հայտնաբերման նպատակով, հետևաբար կատարել այդ աղբյուրների գույքագրում,
- առաջարկել Հրագրանի ձորի երկայնքով գործող ռեստորանային համալիրներին և այլ օբյեկտներին, որպեսզի նրանք տեղադրեն փոքր մաքրման կայաններ, մինչ կեղտաջրերի գետը լցվելը: Չտեղադրելու դեպքում տուգանել, ընդհուպ աշխատելու իրավունքից զրկել,
- առաջարկել Հրագրան գետի ջրի արդյունաբերական աղտոտման գլխավոր աղբյուրներ հանդիսացող «Գրանդ Սան» և «Արմենալ» գործարաններին տեղադրել մաքրման կայաններ մինչ արդյունաբերական կեղտաջրերի գետը լցվելը,
- մեկ անգամ ևս քննարկել «Հրագրան գետի և Երևանյան լճի առափնյա տարածքների մաքրման բնապահպանական 2022թ. ծրագրով նախատեսված միջոցառումների



իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները» ծրագիրը, ներգրավելով հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և ոլորտի մասնագետների:

- կազմակերպել իրազեկման աշխատանքներ բնակիչների՝ հատկապես Երևան համայնքի և Արարատյան հարթավայրի մյուս համայնքների (Գետափնյա, Գեղանիստ, Նորաբաց, Զորակ, Ղուկասավան, Դաշտավան, Դարակերտ) բնակիչների շրջանում, վերջիններիս կողմից գետի աղտոտվածության նվազեցման նպատակով:
- Մասնագետների, շահագրգիռ կազմակերպությունների և անձանց ներգրավմամբ, կազմել և իրականացնել Հրազդան գետի և Երևանյան լճի առափնյա հատվածները հանգստի գոտի դարձնելու ծրագրեր:

«Քաղաքացիական հասարակության դերը բնապահպանական հարցերում որոշումների կայացման գործում» 3-րդ ԱԽ աշխատաժողովի թեմատիկ պանելային քննարկման պատասխանատու՝

Միլվա Այվազյան

«Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ բնապահպանական տեղեկատվության Օրհուս կենտրոնի կազմակերպիչ

*Միջոցառումն իրականացվում է ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի քարտուղարության «Աջակցություն ՀԱՊ աշխատանքային խմբերի գործողություններին» ծրագրի շրջանակում:*

*Սույն հետազոտությունը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Սույն հետազոտության բովանդակությունը բացառապես հեղինակ(ներ)ի կարծիքն է և կարող է չարտացոլել Եվրոպական միության տեսակետը:*